

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

23.03.2012թ.

գ. Արզնի

Ի կատարումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա հրամանով հաստատված վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագրի, ՀՀ Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի թիվ 10-Ա կարգադրության և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի փետրվարի 28-ի N 27-Ա հրամանի՝ ս. թ. մարտի 20-ից 22-ը ներառյալ Կոտայքի մարզի Արզնիի գյուղապետարանի աշխատակազմում իրականացվեց վարչական հսկողություն: Վարչական հսկողությունը իրականացվել է ՀՀ փոխվարչապետի 2012 թվականի հունվարի 30-ի N 02-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման, մեթոդական ուղեցույցի համաձայն: Ուսումնասիրությունները իրականացվել են հետևյալ կազմով՝ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյան (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռ. Թումոյան, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Կ. Հունանյան, նույն բաժնի առաջատար մասնագետ Ս. Բաղդասարյան, իրավաբանական բաժնի պետ Ա. Հարությունյան, հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Ե. Ավետիսյան, քաղաքաշինության վարչության՝ ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ Ա. Վիրաբյան:

Աշխատանքներին մասնակցել են Արզնի համայնքի ղեկավար Վ. Վենիամինովը, աշխատակազմի քարտուղար Եվա Զորոգյանը:

Վարչական հսկողությունը ընդգրկել է 2009 թվականի ապրիլից մինչև 2012թ. մարտը ընկած ժամանակահատվածը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ավագանու լիազորությունների նկատմամբ

1) Արզնի համայնքի ավագանին ընտրվել է 2008թ. հոկտեմբերի 12-ին և բաղկացած է 6 անդամներից /օրենքով սահմանված թիվը՝ 7/ իր լիազորությունները ստանձնել է 2008թ.-ի նոյեմբերի 11-ին: Ավագանու անդամ՝ Վ. Իսակովի լիազորությունները օրենքով սահմանված կարգով վաղաժամկետ դադարեցվել են ավագանու 27.10.2010թ. թիվ 45 որոշմամբ /մահացել է, ՏԻՄ հ. 18./:

2) Արզնի համայնքի ավագանին իր կանոնակարգը ընդունել է 21.11.2008թ. թիվ 8/1 որոշմամբ: Ավագանու նիստերը գումարվել են <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ պարբերության պահանջին համապատասխան:

3) Համայնքի ավագանին համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատել է 14.03.2009թ. թիվ 10-Ն որոշմամբ:

4) Ավագանու՝ 16.12.2009թ. N 41, 17.12.2010թ. N 52, 07.12.2011թ. N 39 որոշումներով համայնքի ղեկավարի վարձատրության չափ է սահմանվել 150000 դրամ, որը համապատասխանում է օրենքով սահմանված չափին /համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 2400 մարդ, ՏԻՄ հ. 27/:

5) Ավագանին օրենքով սահմանված կարգով՝ 14.07.2010թ. թիվ 27 որոշմամբ, համաձայնություն է տվել համայնքի ղեկավարի ներկայացրած՝ <<Այնուուշկա մանկապարտեզ>> ՆՈՒՀ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում Մուսանա Ալեքսանովային նշանակելու մասին: /ՏԻՄ, հ. 16 մաս 1, կետ 15/ : /Մանկապարտեզի կանոնադրությունը ավագանին հաստատել է 15.06.2010թ. թիվ 24 որոշմամբ:/

6) Համայնքային /ստուգվող ժամանակահատվածում/ նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական,

մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7) Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 16.12.2009թ. N 42, 17.12.2010թ. N 53, 07.12.2011թ. N 40 որոշումներով:

8) Ավագանին 02.04.2010թ. N 13 որոշումով՝ Արզնի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել է համապատասխան փոփոխություն, և սահմանված կարգով առաջարկությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ Արզնի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում /2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանի հավելված N9-ում/ համապատասխան փոփոխության հաստատման համար, որը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 01.06.2010թ. N 75-Ա հրամանով /կետ 5/:

Համայնքի ղեկավարի իրականացրած լիազորությունների նկատմամբ

1. Տիրահանության քննադատ

1. Համայնքի բյուջեի նախագծի, դրանում առաջարկվող փոփոխությունների կազմում համայնքի ավագանու հաստատման ներկայացում, բյուջեի կատարման ապահովում և բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության ներկայացում համայնքի ավագանուն:

2. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակների և դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի ներկայացում ավագանու հաստատմանը:

Վարչական հսկողությամբ ներառված ժամանակաշրջաններում համայնքի բյուջեն համալրվել է գույքային հարկերով/հողի և գույքի հարկ/ և տեղական տուրքերով և վճարներով, որոնցից գույքային հարկերը համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի համալրվում են որպես անտողակի հարկեր և կիրառվում են հարկատուների նկատմամբ անկախ նրանց տնտեսական գործունեության արդյունքներից և բազաները վարվում են ավտոմատ տեղեկատվական համակարգի միջոցով: Իսկ տեղական տուրքերով հարկվող օբյեկտների ցանկը ավագանու հաստատմանը ներկայացվել է սահմանված ժամկետներում և կարգով, իսկ որոշման նախագծում ներառվել է օրենքով նախատեսված տեսակներով: Դրույքաչափերի նվազագույն և առավելագույն սահմանների գերազանցում չի արձանագրվել:

3. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, գույքի վարձավճարների գանձման և վերահսկման իրականացում:

Ստուգման պահին համայնքի բյուջեի նկատմամբ հարկատուների պարտավորությունները գույքահարկի գծով կազմում է 32082.0 հազար դրամ, իսկ հողի հարկի գծով 49076.0 հազար դրամ հարկի գումարի չափով, որոնց նկատմամբ հաշվարկված տույժերը և տուգանքները կազմում են 54982.0 հազար դրամ: Ինչպես երևում է վերոհիշյալ գումարների մեծությունից, ակնհայտ է, որ պատշաճ հսկողություն չի իրականացվում համայնքի բյուջեն համալրող հարկերի և վարձավճարների գանձման նկատմամբ: Մասնավորապես չի կիրառվում ՀՀ կառավարության 2003թ-ի 750-Ն որոշման պահանջները: 2011թ-ի դեկտեմբեր ամսին գանձված գումարները տեղական գանձապետական բաժանմունք մուտքագրվել է վերոնշյալ որոշմամբ սահմանված ժամկետների ուշացումներով:

4. Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառում:

Նախորդ երեք տարիների ընթացքում հարկային պարտավորություններ չկատարող անձանց նկատմամբ որևէ դատական կամ այլ միջամտություններ չի կիրառվել, քանզի 3-րդ կետով նշված գումարների մեծությունը տալիս է բավարար հիմք անբարեխիղճ հարկատուների նկատմամբ կիրառել հարկադիր միջոցներ: 2011թ-ին տեղական տուրք վճարող անձանցից միայն 2 սուբյեկտ չի վճարել տուրքը 30.0 հազար դրամի չափով:

5. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծի ներկայացում ավագանու հաստատմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի կողմից իրականացվում են հետևյալ ծառայությունները.

ա/աղբահանության վճար – 500 դրամ յուրաքանչյուր տնային տնտեսության

բ/մանկապարտեզի վճար – 5000 դրամ/մեկ երեխայի հաշվով

Համայնքում նախադպրոցական կրթությունը իրականացվում է <Այրնուշկա մանկապարտեզ> ՀՈԱԿ-ի կողմից, որի համար ծողական վճարի չափ է սահմանվել նաև արտոնություններ տարբեր սոցիալական խմբերի մասով:

Աղբահանության վճարները համաձայն ավագանու որոշման 2010, 2011 և 2012թ-ին սահմանվել է յուրաքանչյուր տնտեսության համար 500 դրամ, սակայն պետք է կիրառվի աղբահանության վճարի սահմանման այլ մոտեցում յուրաքանչյուր բնակչի հաշվով:

6. Համայնքի բյուջեի միջոցների տնօրինում, դրանց նպատակային օգտագործման ապահովում.

2009թ-ի համայնքի տարեկան բյուջեն համայնքի ավագանու կողմից հաստատվել է 32481.8 հազար դրամի չափով, որը տարվա ընթացքում ենթարկվելով փոփոխության կազմել է 72481.8 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 73803.2 հազար դրամ: Ցածր կատարողական է արձանագրվել տեղական տուրքերի գծով, որը կազմել է 1175.7 հազար դրամ կամ նախատեսված ծավալից թերակատարվել է 136.3 հազար դրամով: Ինչպես նաև շուրջ 40.0 հազար դրամով թերակատարվել է համայնքային սեփականություն համարվող հողերի վարձակալական վճարների գծով մուտքերը:

2009թ-ին վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռք բերման նպատակով <Էնդոգոնագ> ՍՊԸ –ի հետ կնքվել է պայմանագիր 7828.0 հազար դրամի չափով, 6528.0 հազար դրամը գնանշման հարցման եղանակով: Իսկ 1300.0 հազար դրամը՝ մեկ անձից գնման ձևով: Նշված աշխատանքների համար տրվել է կանխավճար՝ 4000.0 հազար դրամի չափով, ինչը պայմանագրով նախատեսված չէր:

2010թվական

- նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերում – 2284.3 հազար դրամ/մեկ անձից/

- համակարգչային սաքավորումներ – 404.7 հազար դրամ/մեկ անձից/

- փողոցների լուսավորման կապիտալ նորոգում – 4910.0 հազար դրամ/գնանշման հարցում/

- գույքի ձեռք բերում – 6832.0 հազար դրամ/մեկ անձից/

- վարչական շենքի կապիտալ նորոգում – 6480.0 հազար դրամ/գնանշման հարցում/

- փողոցների ասֆալտի կապիտալ նորոգում – 16858.8 հազար դրամ/ գնանշման հարցում/

- փողոցների ասֆալտի կապիտալ նորոգում – 4713.4 հազար դրամ/ մեկ անձից /

- ամբուլատորիայի շենքի կապիտալ նորոգում – 4587.0 հազար դրամ

2011թվական

- ռոտզման ցանցի կապիտալ նորոգում – 2276.6 հազար դրամ/մեկ անձից/

- փողոցների լուսավորում – 8892.0 հազար դրամ/ մեկ անձից /

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքը ՀՀ կառավարության 07.սեպտեմբերի 2006թ 1347-Ն որոշման համաձայն ունի հաստատված գլխավոր հատակագիծ:

1.Ճարտարապետահատակագծային առաջադրանքների առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.09.2002թ N 1473 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 5, 2010թ-ին 9 և 2011թ-ին 7 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, որոնք լրացված են թերի՝ նշված չեն փորձաքննության տեսակները և նախագծային պահանջները:

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի, դրանց փորձաքննության համաձայնեցման և հաստատման առկայությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 21.12.1998թ. թիվ 812 և քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության

կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 96 որոշումների պահանջներին և համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին համաձայնեցվել է 4; 2010թ-ին 9 և 2011թ-ին 6 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր, որոնք համապատասխանում են գործող կարգին:

3.Շինարարության /քանդման / թույլտվության առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 4; 2010թ-ին 9 և 2011թ-ին 6 շինարարության թույլտվություն,որոնցից մարզպետարան 2010թ-ին իրազեկվել է 6 շինարարության թույլտվություններ, շինարարության թույլտվություններ ստանալու համար հիմք հանդիսացող դիմումները գյուղապետարանի գործավարության մեջ մուտքագրված չեն խախտելով ՀՀ կառավարության 02.02.2002թ N91 որոշման պահանջները:

4.Ավարտված շինարարության շահագործման փաստագրման առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 08.05.03թ.թիվ 626- Ն որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 4 2010թ-ին 2 և 2011թ-ին 3 շինարարության ավարտը փաստագրող ակտեր, որոնցում բացակայում են կատարողական փաստաթղթերը (շինարարության վարման մատյան,ծածկած աշխատանքների ակտերը):

5.Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության ապահովումը ՀՀ կառավարության 28.10.1998թ.թիվ 660 որոշմամբ:

Համայնքի ղեկավարի կողմից ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը և նախագծերի քննարկումը բացակայում է, խախտելով ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ660 որոշման պահանջները:

6.Ինքնակամ շինություններ

Համայնքի ղեկավարի կողմից գործող կարգին համապատասխան 2009թ-ին օրինականացվել է հինգ և 2010թ-ին երկու շինություններ:

7.Կառուցապատման համար կայացված որոշման համապատասխանությունը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, իսկ վերջինիս բացակայության կամ փոփոխության դեպքում ՀՀ կառավարության 30.07.1998թ N 478 և 479 որոշումների պահանջներին:

Արզնի համայնքում գործող կարգի համաձայն 2009թ-ի ընթացքում 0.18հա, 2010թ-ին 0.5հա և 2011թ-ին 0.15հա գյուղատնտեսական նշանակության հողակտորներ փոփոխվել են և դարձել հասարակական կառուցապատման հողակտորներ:

3. Հողօգտագործման քննադատ

Ստուգմից պարզվեց, որ համաձայն համայնքի հողային հաշվեկշռի համայնքում առկա է՝ 301, 85 հա գյուղ.նշանակության հողեր, որից 41,38 հա վարելահող, 40,0հա այգի , 220, 47 հա այլ գյուղ.նշանակության հողեր:

Վերը նշված տարածքներից վարձակալությամբ հատկացվել է 106 հա հողատարածք, որից 81 հա վարելահող և այգի, 25 հա այլ գյուղ.նշանակության հողերի, կնքվել է թվով 31 վարձակալական պայմանագիր, որի տարեկան վարձավճարը կազմում է 2,89 մլն. դրամ, վարձավճարի ապառքներ չկան:

Վերոգրյալից բացի կնքվել է երկու վարձակալական պայմանագիր ընդերքօգտագործման նպատակով 66 հա հողատարածքի համար:

Ստուգման ժամանակահատվածում համայնքում կայացվել էր համայնքային սեփականության հողերի 3 / երեք/ աճուրդ վաճառք , օտարվել էր 2440 քմ հողամաս, որից 2000քմ գյուղ.նշանակության,440քմ բնակավայրի նշանակության: Կայացված աճուրդ-վաճառքներից համայնքի բյուջե է մուտքագրվել 1,43 մլն. դրամ: Աճուրդները տեղի են ունեցել ՀՀ Հողային օրենսդրության պահանջներին համապատասխան:

Համայնքը ունի նոր կազմված գլխավոր հատակագիծ:

4. Տրանսպորտի քննազատ.

- Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման աշխատանքներից՝ կատարվել են միայն համայնքային ենթակայության ճանապարհների նորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 2009թվականին 22064.2 հազար դրամ ընդհանուր գումարով:

-Համայնքում՝ համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ չեն գործում:

-Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշաններ չկան տեղակայված:

5. Առևտրի և ծառայությունների քննազատ.

-Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատվել են ավագանու 14.05.2009թ. թիվ 21 որոշմամբ:

-Ստուգվող ժամանակահատվածում համայնքի տարածքում գործել են 10 առևտրի օբյեկտներ:

-Առևտրի օբյեկտների հսկողություններ ստուգվող ժամանակաշրջանում իրականացվել են, հսկողություն իրականացված օբյեկտներում խախտումներ արձանագրվել են: Առևտրի օբյեկտներում իրականացված հսկողության փաստաթղթերում կան թերություններ և բացթողումներ՝ կապված <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ և 171-րդ հոդվածների /մաս 10/ պահանջներին:

- Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություններ չեն տրամադրվել, /շրջայցի ժամանակ բացօթյա վաճառքի, առևտրի դեպքեր չեն արձանագրվել/:

-Համայնքի տարածքում ժամը 24.00-ից հետո աշխատող օբյեկտներ չկան:

- Թանկարժեք մետաղների առուվաճառք համայնքի տարածքում չի իրականացվում:

6. Այլ քննազատներ

1) 2009թ. գումարվել է ավագանու 12 նիստ, որից 6-ը՝ արտահերթ, 2010թ. 15 նիստ, որից 9-ը՝ արտահերթ, 2011թ.՝ 12 նիստ, որից 5-ը՝ արտահերթ, 2012թ./մինչև ստուգումը/ 3 նիստ, որից 1-ը՝ արտահերթ:

Նիստերի օրակարգերում ընդգրկված որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առաջ սահմանված կարգով տրամադրվել են ավագանու անդամներին 2011 թվականից /2009-2010թթ նախագծեր չեն կազմվել/։ /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդված/:

- Ավագանու նիստերին ներկայացած և քվեարկությանը մասնակցած ավագանու անդամների գրանցումներ կատարվել են, սահմանված կարգով՝ հատուկ մատյանում:

- Ավագանու նիստերը մինչև 2012թ. արձանագրվել են մատյաններում: Այնուհետև, ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո, արձանագրությունները կազմվել են մեթոդական ուղեցույցի 7-րդ կետի պահանջներին համապատասխան: Նշված մեթոդական ուղեցույցը մարզպետի 01.10.2011թ. N 01/15.1/3987-11 գրությամբ ուղարկվել է գյուղապետարան:

- Ավագանու որոշումները ներկայացվում են անհատական ձևաթղթերի վրա, որոնք հիմնականում համապատասխանում են օրենսդրական տեխնիկայի կանոններին՝ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների պահանջներին:

- Մարզպետի համապատասխան գրություններով համայնքի ղեկավարին ներկայացվել են համայնքի ավագանու 2009-2012թթ. որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկվել է նշված որոշումներում արձանագրված թերությունները և բացթողումները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին /<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների/, որոնք կատարվել են սահմանված կարգով:

ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո՝ որոշումները ձևաթղթերի վրա հիմնականում համապատասխանում են մեթոդական ուղեցույցի 6-րդ կետի պահանջներին: /Մեթոդական ուղեցույցը մարզպետի 01.10.2011թ. N 01/15.1/3987-11 գրությամբ ուղարկվել է գյուղապետարան: /

- Ստուգվող ժամանակահատվածի ավագանու նիստերի որոշումները մարզպետարան են առաքվել հիմնականում օրենքով սահմանված ժամկետում: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետ: /

- Ավագանու նիստերի մասին և օրակարգերի հրապարակումները իրականացվում են սահմանված կարգով 3 տեղ, 1-ը՝ գյուղապետարանում: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք, 12-րդ հոդված: Համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 2500 մարդ: /

2) Համայնքի ղեկավարը համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը ավագանու հաստատման է ներկայացրել 14.03.2009թ.:

3) Համայնքի ղեկավարը 14.01.2009թ. թիվ 1 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը, սահմանված կարգով համապատասխան փոփոխությունները կատարել է 19.09.2011թ. թիվ 29 որոշմամբ (առանձնացված ստորաբաժանում չունեն):

4) Աշխատակազմում առկա է քաղաքացիական պաշտպանության պլան՝ հաստատված 10.09.2010թ.:

5) Կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում. 2009թ.՝ 2332 մարդ, 2010թ.՝ 2326 մարդ, 2011թ.՝ 2387 մարդ, 2012թ.՝ 2365 մարդ:

6) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը սահմանված են, գրանցումների մատյանը վարվում է սահմանված կարգով:

7) Համայնքի զինապարտների գրանցամատյանները վարվում են սահմանված ձևերի վրա /վարվում է նաև էլեկտրոնային տարբերակով: /

8) Համայնքում գործում է Արզնիի <<Այրնուշկա մանկապարտեզ>> նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /ՀՈԱԿ-ի կանոնադրության պետական գրանցամատյանում գրանցման համարն է 42.210.02794, գրանցման ամսաթիվը 26.07.2010թ. /վկայական N 03Ա 088801: /

Մանկապարտեզի կանոնադրությունը հաստատվել է ավագանու 15.06.2010թ. թիվ 24 որոշմամբ, այն համապատասխանում է 2002 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին>> N 54 արձանագրային որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը: Կանոնադրությունում ավագանու 14.03.2012թ. թիվ 9 որոշմամբ կատարվել է նաև ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի N 4 արձանագրային որոշման 46-րդ կետով նախատեսված փոփոխությունը:

7. Իրավական հսկողություն

Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ավագանու կողմից 2009 թ. կայացվել է 44 որոշում, 2010 թ.՝ 60 որոշում, 2011 թ.՝ 48 որոշում, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 2009 թ. 34, 2010 թ.՝ 33, 2011 թ.՝ 33 կարգադրություններ, համապատասխանաբար 23, 37, 38 որոշումներ, աշխատակազմի քարտուղարի կողմից համապատասխանաբար 10, 9, 13 հրամաններ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերում արձանագրվել են մի շարք խախտումներ, թերություններ և բացթողումներ:

Համայնքի ղեկավարի 2009 թ. N 11 կարգադրության մեջ չի պահպանվել օրենքի հոդվածի «մաս», «կետ» հարաբերակցությունը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի «օրենքի հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված

կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի», նույնը կրկնվել է 2009 թ.՝ N 21,22, 2010թ. N8,9,11, 2011 թ.՝ N 4, կարգադրություններում, 2009 թ. N 13,14, 2010թ. N 21, 2011 թ.՝ N9 որոշումներում:

2009 թ. N 14 կարգադրությունը չունի նորմատիվ հիմնավորում, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում»: Նույնը կրկնվել է 2011թ. N 13 կարգադրության մեջ, 2009թ. N 18, 2010թ. NN 11, 18 որոշումներում:

2009 թ. N 30 կարգադրության մեջ ճիշտ չի գրառվել օրենքի կրճատ անվանումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը», նույնը կրկնվել է 2011 թ. NN 15,21 կարգադրություններում, 2011թ. NN 22,32 որոշումներում:

2011 թվականի N11 կարգադրության մեջ ճիշտ չի կատարվել կետերի համարակալումը, որը հակասում են <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասին, համաձայն որի <<Իրավական այլ ակտերում կետերը և ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, իսկ պարբերությունները՝ հայերենի այբուբենի փոքրատառերով>>: Նույնը կրկնվել է 2009 թ.՝ N 5, 2011թ. N 6 որոշումներում:

Համայնքում սահմանված կարգով վարվում է իրավական ակտերի հաշվառման մատյաններ, որտեղ սահմանված կարգով հաշվառված են համայնքի ղեկավարի կարգադրությունները և որոշումները, աշխատակազմի քարտուղարի հրամանները, որոնք համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հետ համադրելիս հակասություններ չի արձանագրվել:

Պիմումներ և գրություններ. Գյուղապետարանի աշխատակազմում վարվում է դիմումների մուտքի, գրությունների մուտքի և ելքի մատյաններ: 2009 թվականին մուտք է եղել 98, 2010 թվականին՝ 127, 2011 թվականին՝ 67 դիմումներ, համապատասխանաբար մուտք է եղել 146, 200, 208 և ելք է եղել 170, 217, 238 գրություններ: Բոլոր մուտք եղած դիմումներն ու գրությունները, ինչպես նաև ելք եղած գրությունները գրանցված են դիմումների մուտքի, գրությունների մուտքի և ելքի մատյաններում, որոնք սահմանված կարգով էջակալված, թելակարված և կնքված են:

Համայնքում ստեղծված է խնամակալության և հոգեբարձության հանձնաժողով, որի անհատական կազմը հաստատվել է համայնքի ավագանու 14.03.2009թ. որոշմամբ, իսկ հանձնաժողովը գործում է իր կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան: Ուսումնասիրվող ժամանակահատվածում հանձնաժողովի կողմից գումարվել է երկու նիստ, մեկում քննարկվել է երեխայի տեսակցություն նշանակելու հարցը, մյուսում Արման և Սարգիս Միմոնովների նկատմամբ խնամակալ ճանաչելու հարցը, կայացվել է համապատասխան որոշումներ:

Արձանագրված թերությունները և բացթողումները հիմնականում վերաբերվում են իրավական ակտերի տեխնիկայի կանոններին:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարը 14.01.2009թ. թիվ 1 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը (առանձնացված ստորաբաժանում չունի), համապատասխան փոփոխությունները կատարել է 19.09.2011թ. թիվ 29 որոշմամբ, որտեղ նշված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր փոփոխությունները՝ կապված համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի, խնամակալության և հոգաբարձության հետ: Կանոնադրությունը իրավաբանական անձի պետական գրանցում է ստացել 02.11.2011թ.:

2. Համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանները վարում են ՀՀ կառավարության սահմանված կարգի համաձայն:

3. Համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերը համապատասխանում են իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

4. Համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 16.12.2009թ. N 42, 17.12.2010թ. N 53, 07.12.2011թ. N 40 որոշումներով: Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանով հաստատված՝ Արզնի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին /N 9 հավելված/: Համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին: Հարկ է նշել, որ 2009-11 թթ հաստիքացուցակներում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության և մարզպետարանի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներում հայտնաբերված թերությունները կարգավորվել են ավագանու 27.01.2012թ. թիվ 7 որոշմամբ:

5. Համայնքային ծառայողների պաշտոնների նոր անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 19.02.2009թ. թիվ 6 որոշումով, համաձայն հավելվածների:

Համայնքի ղեկավարի 26.03.2010թ. թիվ 2, 01.04.2011թ. թիվ 16, 13.04.2011թ. թիվ 18 որոշումներով գլխավոր, առաջատար և կրտսեր /1.2-1, 2.3-1, 3.2-2, 3.3-2 ծածկագրերի/ պաշտոնների անձնագրերում կատարվել են փոփոխություններ օրենսդրության պահանջներին համապատասխան, կապված համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի՝ զինապարտների հաշվառման մատյանի վարման և խնամակալության և հոգաբարձության հետ:

6. Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետի /3.3-1 ծածկագրի/ պաշտոնը թափուր է 17.06.2010թ.:

7. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը հիմնականում համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին:

8. Ավագանու 31.03.2009թ. թիվ 14 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված ավագանու անդամների քանակային և անհատական կազմերը /3 անդամ/ /<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքում փոփոխությունները ուժի մեջ են մտել՝ 06.12.2008թ.:/

-Սահմանված կարգին համապատասխան մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահը /համայնքի ղեկավարը/ 03.04.2009թ. թիվ 11 որոշմամբ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը, հանձնաժողովների կազմի փոփոխություններ են կատարվել 28.08.2009թ. թիվ 22, 15.03.2011թ. թիվ 5 որոշումներով: Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության, կայացել է 10.04.2009թ.: Հանձնաժողովի նիստի արձանագրությունում հիմնականում պահպանվել են սահմանված կարգի պահանջները:

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարը 23.02.2007թ. թիվ 10 որոշումով հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը /հավելված 1, 2/, համայնքային ծառայության օրենսդրության փոփոխությունների հետ կապված, սահմանված կարգով, նշված աշխատակարգերում համապատասխան փոփոխություններ կատարել է 19.02.2009թ. թիվ 5 որոշումով /հավելված 1, 2/:

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային

կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարը 23.03.2009թ. թիվ 10 որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը: Կապված աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների հետ՝ կանոնակարգում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարվել են 25.08.2010թ. թիվ 17 որոշմամբ: Կանոնակարգը պատշաճ իրազեկվել է աշխատակազմի աշխատակիցներին:

11. Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գրանցամատյանները: Առկա որոշ բացթողումների վերացման համար ներկայացվել է խորհրդատվություն: Մատյանները համարակալված, թելակարված և կնքված են:

12. Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների, ինչպես նաև մրցույթի արդյունքներով նշանակվածների, կրթությունը, ստաժը և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:

13. Աշխատակազմի համայնքային ծառայողների գրանցամատյանում (Ձև N 1) նշված չէ 2-րդ կարգի մասնագետի /3.3-1 ծածկագրի/ թափուր հաստիքը: Գրանցամատյանային մյուս տվյալները հիմնականում համապատասխանում են մարզպետարան ներկայացված տվյալներին:

14. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրությունից պարզվեց, որ մրցույթները և ատեստավորումները հիմնականում անցկացվել են սահմանված կարգերին համապատասխան:

15. Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները վարվում են /ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով/:

16. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմված զեկուցագրերում նշված թերությունները հիմնականում կարգավորվել են:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՀԱԿՈՒԲՅԱՆ


ԱՆԴԱՄՆԵՐ՝



Ռ. ԹՈՒՄՈՅԱՆ



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Կ. ՀՈՒՆԱՆՅԱՆ



Ս. ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ




Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ




Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՐՁԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՎԵՆԻԱՄԻՆՈՎ

Ծառնորսական աշխատանքները կատարվել են 2012 թ. 03. 16



/ստորագրություն/



/անուն, ազգանուն/

16 03 2012 թ.